Մեծամոր համայնքի հարգելի բնակիչներ,

Հայաստանի Հանրապետության Տոների և հիշատակի օրերի մասին օրենքում ապրիլի 24-ը նշված է Հայոց Ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակի օր:

Մենք խնկարկում ենք այն անմեղների համար ովքեր իրենց կյանքը զոհեցին հանուն հավատի և հայրենիքի: Մենք ոգեկոչում ենք մեր՝ 1,5 միլիոն հայերի հիշատակը, ովքեր զոհ գնացին Օսմանյան կայսրությունում միայն նրա համար, որ իրենք հայ էին: Վերհիշենք նրանց տառապանքի ուղին ու խոնարհվենք նրանց անմար հիշատակի առջև: Հայի ինքնության վերացման դեմ ուղղված ոճիրն մինչ այսօր յուրաքանչյուր հայի հոգում դրոշմված է որպես անդառնալի իրողություն:

Այս օրը մենք միասնաբար աղոթում ենք նրան հոգիների հանգստության համար՝ Հայաստանում և Սփյուռքում: Այս օրը մեր բոլորի սրտերը լցված են կորստյան ցավի ցգացումով:

Սակայն այս տառապանքներն ու փորձություններն անցնելով՝ մենք առավել ջանասիրաբար լծվեցինք մեր հայրենիքը զարգացնելու գործին: Մենք պահպանեցինք մեր մշակույթը մենք հզորացրինք մեր ազգը:

Հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակին՝ իմ խորին հարգանքն եմ բերում հայ ժողովրդի անմեղ զոհերին և հայ ազգին մաղթում խաղաղություն, միասնականություն և տոկունություն: